ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ – ՕԳՈՍՏՈՍ, 2020թ.

WORLD BANK GROUP
Macroeconomics, Trade & Investment

- *Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ (ՆՆԺՀ) հուլիսին տնտեսական ակտիվության ցուցիչը (ՏԱՑ) նվազեց 10.2 տոկոսով՝ համեմատած ՆՆԺՀ հունիսին արձանագրված 7.6 նվազման հետ:*
- *Վերջին շրջանում վարակի տարածման և մարդկանց շարժունակության ցուցանիշներում տեղի ունեցավ աստիճանական բարելավում:*
- *Գնաճի ցածր մակարդակը պահպանվեց՝ հուշելով վերաֆինանսավորման տոկոսադրույքի առավել կրճատում:*
- *Առևտրի ծավալների կրճատման տեմպն աճեց հուլիսին:*
- *Հուլիսին ծախսերի բարձր աճին զուգընթաց բյուջեի դեֆիցիտն ավելի քան կրկնապատկվեց:*
- *Ֆինանսական կայունության ցուցանիշները փոքր-ինչ թուլացան, բայց շարունակում են մնալ հուսալի մակարդակում:*

Տնտեսության վերականգնման տեմպը թուլացավ հուլիսին, ընդ որում, հունիսին ՏԱՑ-ի 7.6 տոկոս նվազման համեմատ ՆՆԺՀ այս ցուցիչն ընկավ 10.2 տոկոսով: Կրճատման ամենաբարձր մակարդակ (ՆՆԺՀ 22 տոկոս) արձանագրեց ծառայությունների ոլորտը (չհաշված առևտուրը)՝ համեմատած արդյունաբերության (ՆՆԺՀ 2.3 տոկոս կրճատում) և արտադրության (ՆՆԺՀ 3.7 տոկոս կրճատում) հետ: Արդյունաբերությունը շահեց նախորդ տարվա ցածր բազային էֆեկտի արդյունքում ՆՆԺՀ հանքարդյունաբերության 1.5 տոկոս աճից: Պահանջարկի մասով վերականգնման վրա բացասաբար ազդեցին համարյա անփոփոխ իրական աշխատավարձերը, արտերկրից փոխանցվող տրանսֆերտների կրճատումը, վարակով պայմանավորված սահմանափակումները, ընկերությունների նվազած դրամական հոսքերն ու իրացվելիությունը, նորմալ կյանքին վերադառնալու համար պահանջվող ավելի երկար ժամանակի հետ կապված սպասումը: Տարեսկզբից մինչև հուլիս ՏԱՑ-ը ՆՆԺՀ կրճատվեց 5.7 տոկոսով, ընդ որում, մասնավոր սպառման և ներդրումների կտրուկ նվազումը մասամբ չեզոքացվեց պետական ընթացիկ ծախսերի աճով և ներկրման ծավալների կրճատմամբ: Տարվա մնացած ժամանակաշրջանում վերականգնման հեռանկարն անորոշ է և կախված է «ՔՈՎԻԴ-19»-ով վարակվածության տեմպից, որը շարունակում է նվազել:

Անշարժ գույքի շուկան փոքր-ինչ վերականգնվեց հուլիսին: Երևանում բնակարանների առուվաճառքի գործարքների թիվը հուլիսին ՆՆԺՀ նվազել է չափավոր (12 տոկոսով)՝ համեմատած 2020թ. 2-րդ եռամսյակում ՆՆԺՀ ավելի քան 60 տոկոսով նվազման հետ: Սրան աջակցել է նախորդ ամսվա համեմատ հուլիսին հիպոթեքային վարկերի կուտակային մեծության 3 տոկոս աճը: Մյուս կողմից, բնակարանների գներն արձանագրել են չափավոր աճ հուլիսին, բայց 2019թ. հուլիսի համեմատ դրանք 7 տոկոսով բարձր են:

Օգոստոսին և սեպտեմբերի սկզբին վարակի տարածման տեմպի դանդաղումը զուգընթաց բարելավվեց շարժունակության ցուցանիշը: Հուլիսին արձանագրված 65 տոկոսի համեմատ սեպտեմբերի սկզբին շարժունակության ցուցանիշներն աճեցին՝ հավասարվելով նախաքովիդային մակարդակների մոտ 80 տոկոսին: Օրական դրական տեստերի մասնաբաժինը, որն օգոստոսին՝ 12 տոկոս էր, ընկավ՝ սեպտեմբերի առաջին կեսին կազմելով 6.5 տոկոս:

Գնաճի մակարդակը փոքր-ինչ բարձրացավ օգոստոսին և ՆՆԺՀ կազմեց 1.8 տոկոս: Ինչևէ, այն շարունակում է մնալ ՀՀ ԿԲ-ի նպատակային միջակայքից (4 +/- 1.5 տոկոս) ցածր՝ ծառայելով խթան դրամավարկային ծրագրային դրույքաչափի առավել կրճատման համար: Սննդամթերքի գները ՆՆԺՀ աճեցին 1.6 տոկոսով, իսկ ալկոհոլային խմիչքների և սիգարետի գները ՆՆԺՀ աճեցին 10 տոկոսով: Տրանսպորտի գները շարունակեցին վերականգնվել՝ ՆՆԺՀ օգոստոսին նվազելով 1.7 տոկոսով՝ համեմատած հուլիսին գրանցված 3.6 տոկոս նվազման հետ, ինչը պայմանավորված էր նավթի միջազգային գների և շարժունակության աճով: Արձագանքելով սրան՝ 2020թ. սեպտեմբերի 15-ին ՀՀ Կենտրոնական բանկը իջեցրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը ևս 25 բազային կետով՝ սահմանելով այն 4.25 տոկոս:

Արտահանումը և ներկրումը, որոնք ապրիլից սկսել էին վերականգնվել, հուլիսին է՛լ ավելի կրճատվեցին: ՆՆԺՀ հուլիսին արտահանման ծավալները նվազեցին 6 տոկոսով՝ պայմանավորված ՆՆԺՀ թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի արտահանման 50 տոկոս և սննդամթերքի արտահանման 9 տոկոս կրճատմամբ: Ներկրման ծավալներն է՛լ ավելի կտրուկ նվազեցին (հուլիսին ՆՆԺՀ 18 տոկոսով) բոլոր ապրանքատեսակների, բայց հատկապես ավտոմեքենաների մասով (ՆՆԺՀ 86 տոկոս կրճատում)՝ 2019թ. բարձր բազայի էֆեկտի հետևանքով: Ներկրման ծավալների նվազման ավելի բարձր տեմպի պայմաններում առևտրային դեֆիցիտը ՆՆԺՀ հուլիսին կրճատվեց 70 մլն ԱՄՆ դոլարով, իսկ տարեսկզբից մինչև հուլիս՝ 290 մլն ԱՄՆ դոլարով: Սրան մասամբ չեզոքացրեց հուլիսին դրամական փոխանցումների (մասնավոր տրանսֆերտներին փոխարինող տվյալի) ներհոսքի շարունակական կրճատումը (6 տոկոսով) և ծառայություններից մուտքերի նվազումը, իսկ ժամանող զբոսաշրջիկների թիվը դեռևս չի աճել, թեև օգոստոսին որոշ միջազգային թռիչքներ վերսկսվեցին: Միջազգային պահուստները, որոնք օգոստոսի վերջի դրությամբ շուրջ 2.7 մլրդ ԱՄՆ դոլար էին, ապահովում են ծածկույթ մոտ 5.3 ամսվա ներկրումների համար: Դրամ/դոլար փոխարժեքը մեծապես պահպանում է իր կայունությունը՝ վերջին մի քանի շաբաթում տատանվելով 1 տոկոսային կետի սահմաններում:

Հուլիսին բյուջեի դեֆիցիտը 56 մլրդ դրամ էր, որի արդյունքում 2020թ. առաջին յոթ ամիսներին գրանցված դեֆիցիտը կրկնապատկվել է՝ կազմելով 105 մլրդ դրամ (կանխատեսված տարեկան ՀՆԱ-ի 1.7 տոկոսը): Հուլիսին դեֆիցիտի կտրուկ աճը պայմանավորված էր ծախսերի ավելացմամբ (ՆՆԺՀ 23 տոկոսով), հատկապես սոցիալական վճարների և դրամաշնորհների գծով: Կապիտալ ծախսերը ՆՆԺՀ աճեցին 11 տոկոսով, բայց տարեկան պլանի համեմատ դրանց մակարդակը դեռևս շատ ցածր է: Մյուս կողմից, ՆՆԺՀ հուլիսին եկամուտները նվազեցին 7 տոկոսով՝ հիմնականում պայմանավորված մաքսատուրքերից և շահութահարկից ստացվող մուտքերի կրճատմամբ: Խրախուսելի է, որ ՆՆԺՀ հուլիսին եկամտային հարկի գծով հավաքագրումներն աճեցին 2 տոկոսով՝ վկայելով զբաղվածության մակարդակի համեմատաբար ուժեղ վերականգնման մասին: Հուլիսին դեֆիցիտը լիովին ֆինանսավորվել է ներքին փոխառությունների աճի հաշվին: Հուլիսի վերջին կառավարության պարտքը հասավ կանխատեսված տարեկան ՀՆԱ-ի 58.7 տոկոս մակարդակին:

Ֆինանսական կայունության ցուցանիշները փոքր-ինչ թուլացան հուլիսին, բայց շարունակում են մնալ կառավարելի մակարդակներում: Չաշխատող վարկերի տեսակարար կշիռը համախառն վարկերում աճեց՝ կազմելով 6.2 տոկոս, ինչը ՆՆԺՀ 0.7 տոկոսային կետով բարձր է, բայց դեռևս ցածր է պատմական միջին ցուցանիշների համեմատ: Ինչևէ, հնարավոր է, որ չաշխատող վարկերը գալիք ամիսներին աճեն, երբ կլրանա առևտրային բանկերի կողմից վարկառուներին շնորհված՝

պարտքի սպասարկման ժամանակավոր դադարեցման ժամկետը: Հունիսին և հուլիսին շահութաբերությունը փոքր-ինչ ընկավ: Ամեն դեպքում, բանկերը լավ կապիտալացված են: Հունիսի համեմատ հուլիսին վարկերն աճեցին 3 տոկոսով՝ հիմնականում պայմանավորված արդյունաբերության և շինարարության ոլորտների վարկավորման աճով: Ավանդները ևս աճեցին, բայց ավելի ցածր տեմպով (հունիսի համեմատ՝ 1.7 տոկոս): Դոլարացման բարձր մակարդակը պահպանվել է, և վարկերի շուրջ 50 տոկոսն արտահայտված է արտարժույթով:

Գծապատկեր 1. Տնտեսության վերականգնման տեմպը հուլիսին դանդաղեց

(Տնտեսական ակտիվության ցուցիչ, ՆՏՆԺՀ փոփոխություն, տոկոս)



Աղբյուրը ՝ՀՀ Վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 2. Գնաճի մակարդակը փոքր-ինչ աճեց, բայց շարունակում է մնալ ՀՀ ԿԲ-ի նպատակային միջակայքից ցածր

(ՍԳՑ գնաճ, ՆՏՆԺՀ փոփոխություն, տոկոս)



Աղբյուրը ՝ՀՀ ԿԲ

Գծապատկեր 3. Արտահանման համեմատ ներկրման ծավալների ավելի մեծ կրճատման պայմաններում առևտրային դեֆիցիտն է՛լ ավելի նեղացավ

(մլն ԱՄՆ դոլար)



Աղբյուրը ՝ՀՀ Վիճակագրական կոմիտե

Գծապատկեր 4. Բյուջեի դեֆիցիտն էապես մեծացավ հուլիսին՝ պայմանավորված ծախսերի աճով

(մլրդ ՀՀ դրամ)



Աղբյուրը ՝ ՖՆ

Գծապատկեր 5. Անշարժ գույքի շուկան շարունակում է վերականգնվել

(1^2 մետրի հաշվով հազ. ՀՀ դրամ)



Աղբյուրը ՝ Կադաստրի կոմիտե

Գծապատկեր 6. ԱՄՆ դոլարի համեմատ ՀՀ դրամը կայուն էր, բայց եվրոյի համեմատ այն արժեզրկվեց

(ցուցիչ, 2020թ. մարտի 2=100)



Աղբյուրը ՝ ՀՀ ԿԲ